ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---- » ---------- 2021թ. N -- -Ա

ՈՐՈՇՈՒՄ

N ԵՔ-ՀՄԱԱՊՁԲ-20/6 ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով, «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. մայիսի 4-ի N526-Ն որոշման N1 հավելվածի 58-րդ կետի պահանջներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. N ԵՔ-ՀՄԱԱՊՁԲ-20/6 գնման գործընթացը հայտարարել չկայացած:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՔ-ՀՄԱՊՁԲ-20/6 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվի առնելով երկրում ստեղծված ռազմական դրության հետևանքով առաջացած սոցիալական խնդիրները՝ Արցախի Հանրապետությունից Երևան ժամանած ընտանիքներին /անձանց/, պատերազմ մեկնած անձանց ընտանիքներին և վիրավոր զինվորների ընտանիքներին սոցիալական աջակցություն տրամադրելու նպատակով առաջացել էր սննդամթերքի ձեռքբերման անհրաժեշտություն:

Այդ նպատակով ս/թ նոյեմբերի 10-ին ՀՀ Կառավարության N526-Ն որոշման 23-րդ կետի 5-րդ ենթակետի գ) պարբերության համաձայն՝ մեկ անձից գնման ձևով հրապարակվել է հրավեր հայտարարություն, որտեղ պայմանագրի կատարման ավարտ էր նշված ս/թ դեկտեմբերի 25-ը:

Քանի որ գնման գործընթացը հնարավոր չէր ավարտել նշված ժամկետում՝ գնիջեցման վերաբերյալ բանակցությունների և բողոքարկման պատճառով, խնդրում ենք գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՔ-ՀՄԱՊՁԲ-20/6 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ԵՔ-ՀՄԱՊՁԲ-20/6 գնման գործընթացը չկայացած հայտարարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՔ-ՀՄԱՊՁԲ-20/6 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«ԵՔ-ՀՄԱՊՁԲ-20/6 գնման գործընթացը չկայացած հայտարարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտների և ծախսերի փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ